ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2017թ. թիվ 195-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 29-ի «2017 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 59-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2017թ. նոյեմբերի 5-ին նշանակել Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ և այդ համայնքի նորընտիր ղեկավարի կողմից լիազորությունների ստանձնման ժամկետը սահմանել 2017թ. դեկտեմբերի 11-ը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Մարգահովիտ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. օգոստոսի 25-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2017թ. հուլիսի 10
ք.Վանաձոր